



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ  
ԿԱԶՄԻ  
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

---

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

2 մայիսի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի թիվ 1  
դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Թունյանի

Անդամակցությամբ՝ Ֆ. Թոխյանի

Ա. Պետրոսյանի

Քննության առնելով Վարտգեզ Գասպարիի անհատական դիմումի ընդունելիության  
հարցը,

**Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ Վարտգեզ Գասպարին (ներկայացուցիչներ՝ Տիգրան Եգորյան, Գենյա Պետրոսյան) դիմել է ՀՀ սահմանադրական դատարան (դիմումը ՀՀ սահմանադրական դատարան է մուտքագրվել 2016 թվականի ապրիլի 27-ին)՝ խնդրելով.

«որոշել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182-րդ հոդվածի /սանկցիան նախատեսող դրույթի մասով/` ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 28-րդ, 29-րդ, 60-րդ /1-4-րդ մասեր/, 71-րդ, 78-րդ, 79-րդ, 80-րդ և 81-րդ հոդվածներին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի` ՀՀ Սահմանադրության 1-ին, 61-րդ, 63-րդ, 78-րդ, 79-րդ, 80-րդ և 81-րդ հոդվածներին համապատասխանության հարցը»:

2. Դիմողի համար բացասական իրավական հետևանքներ է առաջացրել թիվ ՎԴ/9157/05/13 գործով դատարանների կողմից նրա նկատմամբ կիրառված և դատական ակտերում անմիջականորեն վկայակոչված` Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182-րդ հոդվածը, որի հիման վրա դիմողը ենթարկվել է վարչական պատասխանատվության` 50.000 /հիսուն հազար/ ՀՀ դրամի չափով տուգանքի:

Ըստ դիմողի` անկախ նրանից, թե ինչ բովանդակության օրինական պահանջ է ներկայացվել քաղաքացուն ոստիկանության գորքերի զինծառայողի կամ ոստիկանության ծառայողի կողմից, այդ պահանջի չկատարումը ինչ հանգամանքներում և ինչ գործողություններով է դրսևորվել և ինչ հետևանքների է հանգեցրել, ինչպես նաև անկախ պահանջը չկատարած քաղաքացու անձից, նրա մեղքի աստիճանից, գույքային դրությունից, մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքների առկայությունից` բոլոր գանգառուները, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182-րդ հոդվածին համապատասխան, պետք է ենթարկվեն միևնույն վարչական տույժին` սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով տուգանքի ձևով, իսկ իրավակիրառողն այս կանոնից շեղվելու, նախատեսված տուգանքի չափը նվազեցնելու որևէ իրավական հնարավորություն չունի:

Դիմողը մատնանշում է, որ վիճարկվող դրույթը համապատասխան իրավախախտման դեպքում չի սահմանում ոչ այլընտրանքային պատասխանատվության միջոց կիրառելու հնարավորություն և ոչ էլ տուգանքի նվազագույն և առավելագույն սահմաններ, որոնց շրջանակներում իրավակիրառողը

կկարողանար, գործի հանգամանքներից ելնելով, ընտրել համարժեք պատասխանատվության միջոց համապատասխան իրավախախտումը կատարած անձի համար՝ դրանով իսկ ապահովելով հավասարության, համաչափության և արդարության սկզբունքների պահանջները:

3. Վարտգեզ Գասպարիի անհատական դիմումի և դրան կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ գործի քննության ընդունումը սահմանադրական դատարանի կողմից ենթակա է մասնակի ընդունման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

**3.1. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի վերաբերյալ**

Նշյալ դրույթի մասով դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ դիմողը չի ներկայացրել պատշաճ իրավական հիմնավորումներ վիճարկվող դրույթի ենթադրյալ հակասահմանադրականության վերաբերյալ՝ նշելով, որ վիճարկվող դրույթի վերաբերյալ լրացուցիչ հիմնավորումները Սահմանադրական դատարանին կներկայացվեն գրավոր բացատրությամբ: Մինչդեռ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասը, որպես անհատական դիմումի ընդունելիության **պարտադիր պայման**, սահմանում է, որ դիմումը պետք է պարունակի ՀՀ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ: Այս համատեքստում ՀՀ սահմանադրական դատարանն իր ՍԴՌ-839 որոշման մեջ դիրքորոշում է արտահայտել առ այն, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասն ամրագրում է վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ ներկայացնելու՝ դիմողին ներկայացվող պահանջը, համաձայն որի՝ վիճարկվող օրենքի դրույթի հակասահմանադրականությունը պետք է հիմնավորված լինի օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասում նշված որևէ հատկանիշով: Դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ առկա չեն օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասով պայմանավորված՝ խնդրո առարկա դրույթի ենթադրյալ հակասահմանադրականության հիմնավորումներ:

### 3.2 . Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182-րդ հոդվածի վերաբերյալ

Նշյալ դրույթի մասով առկա չեն դիմումի քննության ընդունումը մերժելու հիմքեր, քանի որ`

- դիմումում առաջադրված հարցերը ենթակա են սահմանադրական դատարանին,
- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան,
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում,
- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում,
- դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

4. Դիմողը միջնորդություն է ներկայացրել քննության առարկա գործով պետական տուրքի վճարումից իրեն ազատելու մասին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31, 32 և 69-րդ հոդվածներով` ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

### Ո Ր Ո Շ Ե Ց .

1. Վարսոզեզ Գասպարիի անհատական դիմումով գործի քննության ընդունումը` ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի մասով մերժել:

2. «Վարսոզեզ Գասպարիի դիմումի հիման վրա` Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182-րդ հոդվածի` ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունել քննության:

3. Առաջարկել սույն գործը միավորել ՀՀ սահմանադրական դատարանի 2016 թվականի մարտի 22-ի ՄԴԱՌ-18 աշխատակարգային որոշմամբ «Կիմ Մինասյանի և Լուսինե Հարությունյանի դիմումների հիման վրա` Վարչական իրավախախտում-

ների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» միավորված գործին:

4. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

5. Բավարարել դիմողի՝ պետական տուրքի վճարումից իրեն ազատելու վերաբերյալ միջնորդությունը:

Նախագահող՝

Անդամներ՝

2 մայիսի 2016 թվականի  
ՄԴԴԿՈ/1-15